ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

118
(2968)

5 սեպտեմբերի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

100 դրամ

Քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳՆՈՒՄՆԵՐ՝ ԱՌԱՆՑ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը օգոստոսի 23-ին «Հենդլ» ՍՊԸ-ից գնել է 126 հազար դրամ արժողությամբ նարդի:

«Հենդլ» ՍՊԸ-ին պատկանող սրահը Բուզանդ փողոցում գտնվող «Վերնիսաժում» վաճառակետ ունի եւ վաճառում է ոչ այնքան մատչելի արժեք ունեցող շախմատ, նարդի, հուշանվերներ, ժամացույցներ եւ այս ամենը՝ փայտի փորագրությամբ:

Նարդիի ամենաէժան տարբերակը նշված խանութում 33 հազար դրամ է եւ աստիճանաբար թանկանում է՝ հասնելով մինչեւ 300-360 հազար դրամի:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից ճշտել՝ արդյոք գնումը նախարարի՞ հրամանով է արվել, ո՞ւմ համար է գնվել, եւ եթե նվեր է, ապա ո՞ւմ են նվիրել: Նախարարությունից պատրաստակամորեն պատասխանեցին մեր հարցերին՝ ասելով. «Հարցը եղել է նախարար Գեւորգ Պապոյանի տիրույթից դուրս, նա չի հանդիսացել նվիրատուն:

Գնումը կատարվել է ներկայացուցչական ծախսերի շրջանակում՝ նախարարի տեղակալի կողմից՝ օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյայի Հայաստան կատարած այցի ընթացքում նվիրելու համար:

Նախարարը նախապես չի տեղեկացվել նվերի արժեքից, իսկ տեղեկանալուց հետո՝ հանձնարարել է անցկացնել ծառայողական քննություն, քանի որ բարձր արժեք ունեցող նվերներ հանձնելն անթույլատրելի է համարում:

Նշենք նաեւ, որ ծախսված գումարն արդեն իսկ վերադարձվել է պետբյուջե:

Կից ներկայացնում ենք նաեւ վճարման անդորրագիրը», - հարցին ի պատասխան՝ նախարարությունից տրամադրել էին նաեւ վճարման անդորրագիրը:

Ստացվում է, որ էկոնոմիկայի նախարարի տեղակալը, առանց նախարարին տեղյակ պահելու, թանկարժեք նվերներ է գնել պետբյուջեից հատկացված գումարով, ապա նախարարի ճնշումներից հետո՝ նվերի համապատասխան գումարը վերադարձրել է պետբյուջե:

Եվ այսքանով պատիժն ավարտվում է. սակայն «Ժողովուրդ» օրաթերթը առաջիկայում կբացահայտի, թե ով է նարդիի գնումը կատարած տեղակալը:



ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը, ով ԱԺ անվտանգության եւ պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովն է ղեկավարում, հրահանգներ է տալիս ԱԺ աշխատակազմին, որ ընդդիմադիր պատգամավորներին զրկեն գործուղումներից կամ խորհրդարանական պատվիրակությունների աշխատանքներին մասնակցելուց: Այսպիսով՝ «Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ-ից տեղեկացավ, որ սեպտեմբերի 15-18-ը ՔՊ խմբակցության պատգամավորներ Արուսյակ Ջուլհակյանը եւ Վահագն Ալեքսանյանը Վարշավա են գործուղվելու՝ ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի Ռոուզ-Ռոթ սեմինարին մասնակցելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցմամբ դիմել էր ԱԺ աշխատակազմ՝ պարզելու, թե ինչու են պատվիրակությունների կազմում միայն իշխանական պատգամավորներն ընդգրկված լինում՝ հաշվի առնելով, որ բոլոր երեք խմբակցություններն էլ ունեն ներկայացուցիչ ՆԱՏՕ-ում՝ որպես պատվիրակության հիմնական անդամներ. ինչո՞ւ ընդդիմադիր պատգամավորները չկան պատվիրակությունների կազմում: Մեր հարցմանն ԱԺ-ից տվել են հետեւյալ պատասխանը. «ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի նիստերին ընդառաջ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովում ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար Անդրանիկ Քոչարյանը մշտապես հրավիրում է աշխատանքային քննարկումներ: Ինչպես ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովում ՀՀ ԱԺ պատվիրակության անդամ, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աննա Գրիգորյանը, այնպես էլ նրան փոխարինող Ասպրամ Կրպեյանը չեն մասնակցել այդ քննարկումներին:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:



ՀՀ ՆԳՆ ոստիկանության Նոր Նորքի բաժին նռնակով ներխուժման փորձի գործով անցնող 3 մեղադրյալները կշարունակեն մնալ կալանքի տակ: Մեզ հայտնի դարձավ, որ օրերս նախաքննական մարմինը դիմել է դատարան՝ մեղադրյալների կալանքը երկարաձգելու համար, ինչն էլ դատարանը բավարարել է: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ գործով կալանավորվածների մեղադրանքները վերաորակվել են ու առավել խիստ մեղադրանքներ են առաջադրվել: Տեղեկացնենք, որ գործը ավարտական փուլում է, ու առաջիկայում գործով նախաքննության ավարտ կհայտարարվի, այն կուղարկվի դատարան: Հիշեցնենք, որ այս տարվա մարտի 24-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, 3 զինված քաղաքացի փորձել էին ներխուժել ՆԳՆ ոստիկանության Նոր Նորքի բաժնի վարչական շենք, գործադրել էին նռնակ, ինչի հետեւանքով ներխուժող անձանցից 2-ը վիրավորվել էին եւ տեղափոխվել բուժհաստատություն: Դեպքի առիթով նախաձեռնվել էր քրեական վարույթ՝ ահաբեկչության հատկանիշներով: Նոր Նորքի ոստիկանության շենք ներխուժած եւ վիրավորում ստացած անձանցից մեկը Արթուր Մովսիսյանն էր, որի որդին՝ Էդգար Մովսիսյանը, զոհվել է 44-օրյա պատերազմում: Մյուս կալանավորվածը Կոտայքի մարզի բնակիչ Ստեփան Հովակիմյանն է, որի հետ ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանը շուրջ 2 ժամ բանակցեց, իսկ ահա ավելի ուշ դեպքի վայր եկավ ԱԱԾ հատուկ ջոկատայինների մարտական խումբը եւ վնասազերծեց Հովակիմյանին: Նշենք, որ Հովակիմյանը, մինչեւ նռնակով ոստիկանության Նոր Նորքի բաժին գնալը, սոցիալական ցանցով ուղիղ եթեր էր արել եւ հորդորել ազատ արձակել «Մարտական եղբայրության» 49 անդամներին, որոնք Ոսկեպար գնացել էին՝ հայրենիքի խնդիրներով մտահոգված: Վերջինս ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանի հետ բանակցությունների ժամանակ պնդում էր, որ ոստիկանությունը չենթարկվի Նիկոլ Փաշինյանի պահանջներին:

Աջ ու ձախ ֆինանսական կարգապահության դասեր տվող Նիկոլ Փաշինյանի կառավարության ենթակայությամբ գործող «Հայփոստ ՓԲԸ»-ն չի վճարում Մեղրի համայնքի աղբահանության մասով կուտակված պարտքը: Բանը հասել է նրան, որ սահմանամերձ համայնքը դատարանի միջոցով է փորձում ստանալ իր պարտքի հասանելիք գումարը: Այդ նպատակով հարուցվել է վարչական վարույթ, որի մասին այսօր ծանուցվել է ՔՊ-ականների հուսալի օրրան «Հայփոստ»-ը, որտեղ իշխանական պատգամավորի կնոջ աշխատավարձը տարեցտարի ավելանում է՝ 2021 թվականին դառնալով 6.8 միլիոն, 2022 թվականին՝ 9.5 միլիոն, 2023 թվականին՝ 10.5 միլիոն դրամ: Կոռուպցիան սա՛ է, պարոն Փաշինյան՝ Ձեր ղեկավարման դարաշրջանը: Ի դեպ, տեղեկացնենք նաեւ, որ Հայկ Կոնջորյանի կինը՝ Շուշան Ալեքսանյանը, ընդամենը «Հայփոստ»-ի ֆիլատելիայի բաժնի ղեկավարն է, որը հասարակ հաստիք է այդքան բարձր աշխատավարձի համար:

ԶՐՈՒՅՑ

«ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽ ԲԱՌԻՑ ՍՐԹՍՐԹՈՒՄ Է»

«Հայաստանի Հանրապետական» կուսակցությունը Արցախի անկախության օրվա կապակցությամբ կազմակերպել էր «ԼՂՀ անկախության հիմնախնդիրն իրավական եւ քաղաքական հարթություններում» անունը կրող համաժողով, որին ներկա էին քաղաքական ընդդիմադիր շրջանակների ներկայացուցիչներ, հասարակական եւ քաղաքական գործիչներ, փորձագետներ:

«Ժողովուրդ» օրաթերթը համաժողովի շրջանակում զրուցել է փորձագետ, հասարակական գործիչ Աբրահամ Գասպարյանի հետ:

-Պարոն Գասպարյան, Ձեր ֆեյսբուքյան էջում հայտնել եք, որ Երեւանի պետական համալսարանը ազատել է Ձեզ աշխատանքից: Կխնդրենք ներկայացնել, թե ինչ պատճառաբանությամբ են այդ քայլին գնացել:

-Ես իմ ֆեյսբուքյան հանրագրում շատ լակոնիկ եւ կոռեկտության սահմանները պահելով՝ ներկայացրել եմ հրամանը, որը ստացել եմ պետհամալսարանի ռեկտորի ստորագրությամբ, այն հղում է կատարում աշխատանքային օրենսգրքին եւ համալսարանի օրենսդրության համապատասխան կետին, որի համաձայն՝ «ռեկտորը հնարավորություն ունի ազատել աշխատանքից, կամ պայմանագիր չկնքել իքս աշխատակցի հետ»:

Ծայրից ծայր թյուրիմացություն է, քանի որ ես, նախ, հաստիքային աշխատող եմ եղել համալսարանում, երկրորդ՝ նրանք տարիներ շարունակ սեւեռված են եղել քաղաքական ընդդիմադիր հայացքներ ունեցող դասախոսների վրա, երրորդ՝ անցկացրել եմ տասնհինգ տարվա գիտամանկավարժական գործունեություն՝ գիտական հոդվածներից մինչեւ ուսանողների կողմից ամենաբարձր գնահատականներ: Կա էլեկտրոնային համակարգ, որտեղ կարելի է ամեն բան տեսնել: Այս հարցում միակը չեմ, իմ ընկերներին նույնպես նույն պատճառաբանություններով են հեռացրել՝ իբր «առարկայի դուրսբերմամբ» ծրագրից: Բայց կան առարկաներ, որոնք հիմնարար են, առանցքային են ուսանողի համար, երբ հաճախում է համալսարան, ինչպես, օրինակ, քաղաքագիտության հիմունքները՝ միջազգային հարաբերություններում, կամ ազգային անվտանգության հայեցակարգերի համեմատական վերլուծություն, կոնֆլիկտ եւ պրոպագանդայի ազդեցություն եւ այլն: Սրանք այն հիմնարար առարկաներն են, որոնք մենք դասավանդում էինք, սակայն ժամանակի ընթացքում բոլորը կամ կրճատվեցին կամ հանվեցին այն պատճառաբանությամբ, թե նպատակահարմար չեն տեսնում նման դասընթացի առկայությունը: Ծայրից ծայր «նոնսենս» է եւ հիմավորումը, թե առարկաների միջեւ կրկնություն կա: Մի խեղկատակ լրատվամիջոց կա այս ոհմակին ծառայող, որ, իբրեւ թե, դեկանատից, հավանաբար՝ ՔՊ-ական փոխդեկանից, վերցրել է մատյանը, որտեղ իմ ստորագրությունները չկան, եւ հրապարակել: Թույլ տվեք նշել, որ դա մագիստրոսական յոթ հոգանոց կուրս է եղել, որից դասերին եկել է միայն երեք հոգի եւ չուներ ավագ: Փետրվար եւ մարտ ամիսների ստորագրությունների բացակայությունը ներկայացրել են որպես իմ բացակայություն: Աբրահամ Գասպարյանը մինչեւ ապրիլի 23-ը գնացել է դասի. եթե դա է հիմքը, ապա թող ներկայացնեն, հակառակ դեպքում՝ ցանկացած քայլ, որ անում են, ներկայացվում է ազատ խոսքի սահմանափակման եւ բռնաճնշումների համատեքստում:

- Ամսի 2-ին Արցախի անկախության օրն էր, որի ընթացքում ոչ մի պետական միջոցառում չեղավ եւ ոչ մի պետական պաշտոնյա ուղերձով հանդես չեկավ. ո՞րն է պատճառը:

-Պետական մտածողությունից ինստիտուցիոնալ մակարդակով դուրս են մղել Արցախը: Արցախ բառը լսում են այս իշխանությունները՝ սրթսրթում են: Արցախը իրենց համար թշնամանք է: ՀՀ անկախության լոկոմոտիվը Արցախի անկախությունն էր, սակայն դա չի հիշվում, փոխարենը՝ հեծանիվ, գնանք դպրոց եւ այլն: Ի՞նչ է նշանակում՝ «Կիրանցում երբեք այսքան ապահով չի եղել»: Անցած վեց տարվա քաղաքական կուրսին պաշտոնապես հակառակ՝ բազմաթիվ հայտարարություններ է արել Նիկոլ Փաշինյանը վերջին ասուլիսի ընթացքում: Ի՞նչ կարելի է ակնկալել մի մարդուց, ով օգոստոսի 23-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի օրը, ստատուսով գրում է՝ կարդացե՛ք իմ գրած ոտանավորը: Սա պետության ղեկավարի պահվա՞ծք է:

Այն պահվածքն ու գործելաոճը, որ նա այսօր ունի՝ Արցախի սիմվոլիստիկային, դրոշին, ամեն ինչին դեմ, չի կարող թույլ տալ Արցախի հարցի բարձրաձայնում: Որտեղ Արցախի դրոշ կա՝ նա այնպիսի քայլերի կդիմի, ինչպիսի քայլերի որ կդիմեին Ադրբեջանը կամ Թուրքիան:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀՀ-Ի ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Երեք տարի անց հաստատվեց եռակողմ հանդիպման ընթացքում ձեռք բերված համաձայնությամբ «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգը:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ կառավարության աշնանային առաջին նիստում չզեկուցվող հարցերի շարքում հաստատման է ներկայացված «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի ու Ադրբեջանի Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի համատեղ գործունեության մասին» կանոնակարգը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծը:

Կանոնակարգում ամրագրված պարտավորությունների համաձայն՝Հայաստանի Սահմանադրության համապատասխանությունը որոշելու նպատակով պետք է դիմել ՀՀ Սահմանադրական դատարան: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում ՀՀ կառավարության ներկայացուցիչ պետք է նշանակվի փոխվարչապետ Միհր Գրիգորյանը:

Հայաստանի եւ Ադրբեջանի միջպետական սահմանի սահմանազատման հարցով հանձնաժողով ստեղծելու պայմանավորվածությունը ձեռք է բերվել 2021թ. նոյեմբերի 26-ին Սոչիում՝ Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի ղեկավարների եռակողմ հանդիպման ընթացքում, որով Կողմերը պայմանավորվել են քայլեր ձեռնարկել Հայաստան-Ադրբեջան սահմանային կայունության եւ անվտանգության մակարդակի բարձրացման ուղղությամբ եւ ստեղծել Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման հարցերով երկկողմ հանձնաժողով:

2022թ. ապրիլի 6-ին Բրյուսելում Հայաստանի Հանրապետության Վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիեւի եռակողմ հանդիպման շրջանակներում Հայաստանն ու Ադրբեջանը համաձայնել են մինչեւ 2022թ. ապրիլի վերջ ստեղծել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանների սահմանազատման հարցերով երկկողմ հանձնաժողով, որին վերապահված կլինի նաեւ սահմանի երկայնքով անվտանգություն եւ կայունություն ապահովելու լիազորություն:

2022թ. հոկտեմբերի 6-ին Պրահայում կայացած «Եվրոպական քաղաքական համայնքի» առաջին հանդիպման շրջանակներում Ֆրանսիայի Հանրապետության նախագահի եւ Եվրոպական խորհրդի նախագահի նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիեւի միջեւ տեղի ունեցած հանդիպմանը Հայաստանն ու Ադրբեջանը հաստատել են իրենց հանձնառությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը եւ 1991թ. Ալմաթիի հռչակագրին, որոնց միջոցով երկու կողմերն էլ ճանաչել են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը: Կողմերը հաստատել են, որ դա հիմք կհանդիսանա սահմանազատման հարցերով հանձնաժողովների աշխատանքների համար:

Իսկ ինչ է ենթադրում Հռչակագրի այս կետը. չնայած Ադրբեջանի պնդումներին՝ ԱՊՀ պետություններն իրականում ԱՊՀ հիմնադիր փաստաթղթերով չեն ընդունել խորհրդային սահմանների շարունակականությունը: ԱՊՀ հիմնադիր փաստաթուղթը եւ Ալմաթիի հռչակագիրը խոսում են տարածքային ամբողջականության եւ տարածքների անքակտելիության մասին, որոնք բոլորովին այլ երեւույթ են:

Համաձայնագրի 5-րդ հոդվածում, մասնավորապես, ամրագրված է հետեւյալը. «Բարձր պայմանավորվող կողմերը ճանաչում եւ հարգում են միմյանց տարածքային ամբողջականությունը եւ համագործակցության շրջանակներում գոյություն ունեցող սահմանների անձեռնմխելիությունը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՊԱՇՏՈՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Գրետա Մնացականյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

«Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով եւ 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Գրետա Նորիկի Մնացականյանին 2024 թվականի սեպտեմբերի 3-ից ազատել վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ծրագրերի իրականացման եւ մշտադիտարկման վարչության ծրագրերի մշտադիտարկման բաժնի պետի (պաշտոնի ծածկագիրը՝ 06-Գ28-23.2-Ղ3-4) պաշտոնից», - ասված է որոշման մեջ:

ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Կառավարությունը սեպտեմբերի 5-ին հաստատվելու է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման հանձնաժողովների համատեղ գործունեության կանոնակարգը, որից հետո փաստաթուղթը ուղարկվելու է Սահմանադրական դատարան: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասել է Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը:

Հարցին՝ արդյոք Ադրբեջանը սկսե՞լ է կանոնակարգի հաստատման գործընթացը՝ Մինասյանը պատասխանեց.

«Ճիշտ կլինի, որ այս մասով սահմանափակվենք այն հայտարարություններով, որոնք ունենք: Կա կանոնակարգ, որը առաջիկա հինգշաբթի օրը որպես միջազգային պայմանագրի նախագիծ հաստատվելու է կառավարության կողմից եւ ուղարկվելու է Սահմանադրական դատարան: Կարծում եմ՝ կոնսենսուսային եւ որակյալ փաստաթուղթ է եւ ԵԱՀԿ-ի ուղեցույցին համապատասխան»:

ԱԳ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ Է ՀԱՅՏՆՈՒՄ

ԱԳ փոխնախարար Մնացական Սաֆարյանը մանրամասներ է հայտնել Ադրբեջանի հետ բանակցություններից: Անդրադառնալով Սյունիքով Ադրբեջանը Նախիջեւանին կապող ճանապարհի վերահսկողությունը մասնավոր պահնորդական ընկերությանը պատվիրակելու թեմային եւ հարցին՝ Ադրբեջանո՞ւմ էլ պետք է համապատասխան ընկերություն լինի, նա ասել է՝ այո:

Իսկ թե ի՞նչ ազգի ներկայացուցիչներ պետք է լինեն մասնավոր պահնորդական ընկերության ներկայացուցիչները, նա ասել է. «Հավելյալ տեղեկություն չկա»: Ըստ նրա՝ ընդամենը խոսվել է դրա հնարավորության մասին:

Հարցին՝ արդյոք ինքնիշխանության սկզբունքը դրանով չի՞ խախտվում, նա նշել է՝ ոչ, իհարկե: Մնացածը կախված է մանրամասներից: Ընկերությունը կարող է սպասարկել»:

Ըստ նրա՝ այնտեղ կանգնած կլինեն նաեւ հայ սահմանապահներն ու մաքսավորները:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՄՆ-Ն ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՂԱՐԿԻ ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

ԱՄՆ վարչակազմը մտադիր է առաջիկա շաբաթներին նոր ռազմական օգնություն ուղարկել Ուկրաինային: Այս մասին լրագրողների համար հերթական առցանց ճեպազրույցում հայտարարել է Սպիտակ տան Ազգային անվտանգության խորհրդի ռազմավարական հաղորդակցությունների համակարգող Ջոն Քիրբին:

«Ինչպես նախագահ Ջո Բայդենը հստակ ասել է, մեր աջակցությունն Ուկրաինային մնում է անսասան, եւ մենք կշարունակենք կենտրոնանալ նրանց ռազմական եւ հակաօդային պաշտպանության ամրապնդման վրա: Ինչպես տեսաք, ընդամենը 10 օր առաջ, մենք հայտարարեցինք ռազմական օգնության եւս մեկ փաթեթի մասին, եւ նույնիսկ ավելին կտրամադրվի առաջիկա շաբաթների ընթացքում»,- ասել է Սպիտակ տան պաշտոնյան:

Նա չի հստակեցրել, թե կոնկրետ ինչ է պատրաստվում Վաշինգտոնը լրացուցիչ ուղարկել Կիեւ:

ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԲՐԻԿՍ-Ի ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

Հայաստանը մասնակցելու է հոկտեմբերին Կազանում կայանալիք ԲՐԻԿՍ-ի գագաթնաժողովին:

Այս մասին Ազգային ժողովում կայացած ճեպազրույցի ընթացքում հայտարարել է ՀՀ փոխարտգործնախարար Մնացական Սաֆարյանը:

«Այո, մասնակցելու է», - ասել է Սաֆարյանը՝ պատասխանելով գագաթնաժողովին Հայաստանի հնարավոր մասնակցության վերաբերյալ հարցին:

ՀԱՊԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երեւանը դե յուրե մնում է ՀԱՊԿ լիիրավ անդամ, սակայն ներկայում Հայաստանի ղեկավարությունը փաստացի հետեւում է այս փոխգործակցությունից հեռանալու գծին, ինչը հակասում է հայ ժողովրդի շահերին. այս մասին ճեպազրույցում ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Մենք հուսով ենք, որ Հայաստանի եւ ամբողջ տարածաշրջանի ապագա անվտանգության շահերից ելնելով, ՀԱՊԿ շրջանակում Հայաստանի հետ մեր համագործակցությունը լիարժեք կվերականգնվի»,- նշել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը:

«Վերջերս նրանք հայտարարեցին, որ ՀԱՊԿ-ը լքել է Հայաստանի տարածքը, հետո սկսեցին հայտարարել, որ սառեցված են այս կազմակերպության ներսում... Հասկանում եք, ամեն բառի, արտահայտության հետեւում պետք է լինի ոչ միայն իմաստ, որը չափազանց կարեւոր է, եթե այն ասվում է պաշտոնյայի կողմից, այլեւ պետք է լինի պատասխանատվություն ոչ միայն ասվածի, այլ նաեւ հետեւանքների համար: Ինձ թվում է՝ բառերի հետ խաղալը, այսպես ասած, ոչ մի լավ բանի չի բերի: Հատկապես հաշվի առնելով, որ տարածաշրջանն արդեն անցել է բազմաթիվ փորձությունների միջով», - ասել է Զախարովան:

ՆԻՍՏԸ ՀԵՏԱՁԳՎԵԼ Է

ՄՏՔԱՓՈԽՎԵ՞Լ Է, ԹԵ՞ ՊԱՐԶԱՊԵՍ ՁԳՈՒՇԱՆՈՒՄ Է

Սեպտեմբերի 3-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Գորիսի նստավայրում ֆնվում էր Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանին ազատազրկելու՝ պրոբացիայի ծառայության պահանջը, սակայն նիստը հետաձգվել է եւ տեղափոխվել սեպտեմբերի 10-ին: Հաջորդ դատական նիստին դատարանը լսելու է Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանին, բանի որ այդ օրը որոշում կայացնելու վերջնաժամկետն է:



Բայց նախ հիշեցնենք, թե ինչպես է ամեն բան սկսվել:

Առուշ Առուշանյանը մեղադրվում է պաշտոնեական դիրքի չարաշահման, ինքնիրավչության, ինչպես նաեւ դիտավորությամբ այլ մարդու առողջությանը վնաս պատճառելու մեջ:

Դեռ 2021 թվականի հուլիսի 16-ին, երբ Առուշանյանը երբեմնի ընդդիմադիր էր՝ «Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածու, Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել էր Գորիս համայնքի ղեկավար Առուշանյանին կալանավորելու միջնորդությունը:

Հիշեցնենք, որ Առուշանյանին կալանավորելու պատճառը հանդիսացել է 2021 թվականին հունիսի 20-ին ՀՀ-ում կայացած Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում՝ ուղղակի դիտավորությամբ նախապատրաստած ծանր հանցագործությունը՝ ընտրություններին մասնակցելու եւ «Հայաստան» կուսակցությունների դաշինքի օգտին կողմ քվեարկելու համար նույն համայնքի Քարահունջ բնակավայրի երկու կամ ավելի ընտրողի կաշառք տալը. սակայն նրա կամքից անկախ հանգամանքներով՝ հանցագործությունն ավարտին չի հասցվել: Բացի այդ, փաստական տվյալներ էին ձեռք բերվել նաեւ այն մասին, որ համայնքի ղեկավարը կազմակերպել էր նույն ընտրությունների ժամանակ Գորիս համայնքի Քարահունջ բնակավայրի որոշ ընտրողների ընտրական իրավունքի ազատ իրականացմանը խոչընդոտելու գործողություններ, ինչպես նաեւ այլ կախվածությունն օգտագործելով՝ ընտրողներին կուսակցությունների հիշյալ դաշինքի օգտին կողմ քվեարկելուն հարկադրող գործողություններ:

Նշենք, որ Առուշանյանի կալանավորումը շատերը կապում էին ընդդիմադիր դիրքորոշում ունենալու հետ, սակայն վերջերս էլ նկատում են, որ երբեմնի «ընդդիմադիրի» տեսակետներում կարծես բան է փոխվել, քանի որ, առաջվա համեմատ, մեղմ է արտահայտվում իշխանության մասին:

Հավելենք, որ սեպտեմբերի 3-ին լրագրողների հետ զրույցում Առուշանյանն անդրադարձել է իր հրաժարական տալուն, Սյունիքի մարզպետի հետ իր մտերմությանը եւ ասել է, որ հրաժարական տալ չի պատրաստվում՝ իրեն ժողովուրդն է ընտրել, քանի որ, երբ կալանքի տակ է եղել, ժողովուրդը մոտ 70 տոկոս վստահության քվե է տվել նրան, իսկ Սյունիքի մարզպետի հետ մտերմությունը եղել է մինչ մարզպետ դառնալը, եւ նա միշտ էլ իր ընկերն է լինելու: Վերջում էլ հավելել է, որ Սյունիքի մարզպետին այս ողջ պրոցեսների մեջ կապելը ուղղակի կոռեկտ չէ:

Հետաքրքրականն այն է, որ, իրոք, Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանի հայտարարությունները մեղմվել են, կամ էլ վերջինս ուղղակի զգուշավոր է՝ իշխանությունների կողմից չկալանավորվելու նպատակով:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔ ՈՒՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՔԿՀ ՊԵՏԸ

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հրամանով՝ Հեղինե Մարտիրոսյանը նշանակվել է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի պետ:

Նա, մինչ քրեակատարողական հիմնարկի պետի պաշտոն զբաղեցնելը, 2003-2004 թվականներին եղել է ՀՀ ԱՆ «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի սոցիալ-հոգեբանական վերականգնման խմբի առաջատար մասնագետ, որից հետո՝ 2004-2007թթ. ՀՀ ԱՆ «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների խմբի առաջատար մասնագետ, արդեն 2007-2017 թվականներին՝ ՀՀ ԱՆ «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական եւ իրավական աշխատանքների խմբի ղեկավար:

Իսկ արդեն 2017-ից մինչեւ 2024 թվականները ՀՀ ԱՆ «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ է եղել:

Հեղինե Մարտիրոսյանն իր անշարժ գույքի, եկամուտների եւ ծախսերի հայտարարագիրը ներկայացրել է 2024 թվականի մարտի 16-ին:

Նա հաշվետու տարվա սկզբում հայտարարագրել է Երեւանի կենտրոնում բնակարան՝ բազմաբնակարան շենքում, բաժնային սեփականության իրավունքով:

Տվյալ անշարժ գույքը հաշվետու տարվա վերջում պահպանվել է:

Մարտիրոսյանի կանխիկ դրամը հաշվետու տարվա սկզբում կազմել է 5 մլն 700 հազար, ինչը տարվա վերջում դարձել է 7 մլն 600 հազար դրամ:

Նրա հաշվետու տարվա եկամուտը կազմել է 6 մլն 583 հազար դրամ, որը աշխատանքի վարձատրության գումարն է:

Հիշեցնենք, որ 2024 թ. հունվարի 30-ից Հեղինե Մարտիրոսյանը «Աբովյան» ՔԿՀ պետի ժամանակավոր պաշտոնակատարն էր:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ԷՔՍՊՈՆԵՐ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը Կառավարության աշնանային առաջին նիստին հաստատման է ներկայացրել Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՄԱԿ զբոսաշրջություն) միջեւ ՄԱԿ զբոսաշրջության գինու զբոսաշրջության 8-րդ համաշխարհային համաժողովի կազմակերպման վերաբերյալ համաձայնագրի ստորագրման առաջարկությունը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ համաժողովը նախատեսվում է կազմակերպել 2024 թվականի սեպտեմբերի 11-13-ը:

«Ժողովուրդ» օրաթերթը բաց աղբյուրներից տեղեկացավ, որ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունն անցած ամիս 8 մլն դրամ արժողությամբ պայմանագիր է կնքել հնդկական ընկերության հետ: Պայմանագրի նպատակը Հնդկաստանի Հանրապետության Նյու-Դելի քաղաքում կայանալիք World food India 2024 միջազգային ցուցահանդեսին մասնակցելն է:

Միջոցառումը կազմակերպվում է Հնդկաստանի սննդի վերամշակման արդյունաբերության նախարարության կողմից եւ տեւելու է սեպտեմբերի 19-22-ը:

«Ժողովուրդ» օրաթերթը նույն աղբյուրներից տեղեկացավ, որ օրեր առաջ՝ սեպտեմբերի 2-ին, էկոնոմիկայի նախարարությունը Սաուդյան Արաբիայի Ռիադ քաղաքում կայանալիք Foodex Saudi-2024 սննդի եւ ոչ ալկոհոլային խմիչքների միջազգային ցուցահանդեսին մասնակցելու համար արաբական ընկերության հետ կնքել է 21 մլն 542 հազար դրամ արժողությամբ պայմանագիր:

Պայմանագրերով հիմնականում ձեռք են բերվել տեղում օգտագործվելիք անհրաժեշտ իրեր՝ սեղան, աթոռ, սուրճի մեքենա, ջրի տարաներ եւ այլն:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ԿՐԱԿՈՑԻՑ

ՃՆՇԵԼ ԷԻՆ ՁԻՆՎՈՐԻՆ՝ ԽԵՌԱԽՈՍՈՎ ԽՈՍԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս է անդրադարձել՝ զինվորների կողմից դիրքում քնելու պատճառով առաջացած խոսակցություններին, ինչից հետո զինվորներն ինքնասպան են լինում:

Սեպտեմբերի 2-ին՝ ժամը 10:10-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության գոտու մարտական դիրքում հայտնաբերվել էր զինծառայող Էդգար Ալեքսանյանի դին՝ կզակի շրջանում հրազենային վնասվածքով:

«Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ գրել էր, որ զինվորին ճնշել են, եւ ահա երեկ քննչական կոմիտեն հայտնեց, որ ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Հ. Ե.-ն, տվյալ մարտական դիրքում որպես դիտորդ ընդգրկված լինելով մարտական հերթապահության, 2024թ. օգոստոսի 27-ից մինչեւ սեպտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում՝ տարբեր օրերի, անձնակազմի ներկայությամբ պարբերաբար նվաստացրել է նույն մարտական դիրքում որպես դիտորդ ծառայության ընդգրկված զինծառայող Է. Ալեքսանյանի անձնական պատիվն ու արժանապատվությունը, հնչեցրել հայհոյանքներ, հարվածել:

Է. Ալեքսանյանը, հայտնվելով անելանելի վիճակում, 2024թ.-ի սեպտեմբերի 2-ին՝ ժամը 09:45-ի սահմաններում, նույն մարտական դիրքում, դիտորդի պարտականությունները կատարելու ընթացքում, «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգով մեկ կրակոց է արձակել կզակի շրջանում եւ ինքնասպան եղել:

Իսկ թե ինչի համար է նվաստացրել, նախաքննական մարմինը չի նշել, սակայն «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ դիրքում քնելու թեման ու հեռախոսով խոսելու հարցը դարձել է պատճառ, որ ժամկետային զինծառայողին հասցրել են ինքնասպանության:

Այս տարվա 2024 թվականի հունվարի 9-ին՝ ժամը 04:30-ից 05:00-ի սահմաններում, կոչումով լեյտենանտ Կ. Կարապետյանը ծառայողական հարցերի շուրջ, այն է՝ դիրքում քնելու կապակցությամբ առաջացած խոսակցության ժամանակ, վիրավորական արտահայտություն է հնչեցրել ծառայակցի՝ Ն. Խ.-ի հասցեին:

Վերջինս, չհանդուրժելով իրեն հասցված վիրավորանքը, վրեժխնդրության շարժառիթով 2024 թվականի հունվարի 9-ին՝ ժամը 06:00-ի սահմաններում, հանձնելով մարտական հերթափոխը, մտել է մարտական դիրքի գետնատնակ եւ լիցքավորելով իրեն ամրակցված ԱԿ-103 տեսակի ինքնաձիգը՝ մոտեցել է պառկած վիճակում գտնվող Կարեն Կարապետյանին, որից հետո նախ մենահատ, ապա կրակահերթ է արձակել վերջինիս ուղղությամբ՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ:

Ինչո՞վ է զբաղված ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, Սյունիքի Կորպուսի հրամանատար գեներալ-մայոր Արմեն Գյոզալյանը, իրավապահ համակարգը, երբ բանակում արդեն քանի անգամ է՝ զինվորները վերջ են տալիս իրենց կյանքին, քանի որ դիրքում քնելու թեման դարձել է ժամկետային զինծառայողներին նվաստացնելու, ճնշելու պատճառ, ու ժամկետային զինծառայողներն իրենց ամրակցված զենքերով ինքնասպան են լինում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՎԱՐՈՒՅԹ՝ ԴԱՏԱՎՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Դատական համակարգում հեղինակություն վայելող դատավորների դեմ իշխանությունների արշավը շարունակվում է. այս անգամ թիրախում Երեւանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Վահե Միսակյանն է: ՀՀ արդարադատության նախարարությունը կրկին կարգապահական վարույթ է հարուցել Վահե Միսակյանի նկատմամբ:

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվել է դատախազության հաղորդման հիման վրա՝ Վազգեն Մանուկյանի գործով, իբրեւ դատավարական ժամկետների խախտման պատճառաբանությամբ:

ՀՀ ԱՆ-ն արդեն իսկ միջնորդություն է ներկայացրել ԲԴԽ՝ պահանջելով կարգապահական պատասխանատվության ենթարկել դատավորին: ԲԴԽ կայքից տեղեկանում ենք, որ միջնորդության քննությունը նախատեսված է սեպտեմբերի 17-ին:

Նշենք, որ ավելի վաղ՝ ապրիլի 4-ի որոշմամբ, դատավոր Վահե Միսակյանի նկատմամբ ԲԴԽ-ն խիստ նկատողություն է հայտարարել, որի «մարման» ժամկետը երկու տարի է, հետեւաբար, չի բացառվում, որ խնդիր է դրված դատավորի լիազորությունները դադարեցնելու:

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ՎԹԱՐ

2024 թվականի սեպտեմբերի 2-ին՝ ժամը 22:00-ին, ահազանգ է ստացվել, որ Երեւան-Մեղրի ավտոմայրուղու Ջանգակատան հատվածում ճանապարհատրանսպորտային պատահար է տեղի ունեցել, որի արդյունքում կան տուժածներ:

Կատարված ստուգմամբ պարզվել է, որ նույն օրը՝ ժամը 21:45-ի սահմաններում, MERCEDES մակնիշի ավտոմեքենան Երեւան-Մեղրի ճանապարհի 70.5-րդ կիլոմետրի հատվածում բախվել է դիմացից ընթացող ZIL մակնիշի բեռնատարի հետնամասին, որի հետեւանքով MERCEDES-ի ուղեւորներից մեկը՝10 տարեկան աղջիկ երեխան, մահացել է տեղում, իսկ 3 ամսական տղան՝ «Արարատ» Բ/Կ տեղափոխելու ճանապարհին (վերջիններս վարորդի զավակներն են): Իսկ վարորդը եւ 2 ուղեւորներ, որոնցից մեկը՝վարորդի կինը, մյուսը՝ 5-ամյա դուստը, մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Արարատ» բժշկական կենտրոն: Մոր վիճակը ծայրահեղ ծանր է, դստեր վիճակը գնահատվում է ծանր:

Դեպքի առթիվ սեպտեմբերի 2-ին ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության Վեդիի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Իրականացվել է դեպքի վայրի եւ վթարված ավտոմեքենաների զննություն: Ստուգվել է վարորդների սթափությունը եւ պարզվել է, որ նրանք գտնվում են սթափ վիճակում:

Նշանակվել են դիակների դատաբժշկական, ինչպես նաեւ ավտոտեխնիկական փորձաքննություններ:

Ավտովթարի հանգամանքները պարզելու նպատակով իրականացվում են անհրաժեշտ, անհետաձգելի քննչական եւ վարութային գործողություններ:

ԼՈՒՐԵՐ

ԱՀ ՆԱԽԿԻՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երեկ դատարանը որոշեց ոստիկանների միջոցով ՀՅԴ բյուրոյի նախկին ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանին, ինչպես նաեւ Արցախի անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Վիտալի Բալասանյանին ծանուցել ներկայանալ դատարան:

Նույն օրը Կենտրոնի դատարան էր ներկայացել Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմում անվտանգության վարչության պետի տեղակալ գնդապետ Նորայր Ասլանյանը, նրան մեղադրում են հրազենի եւ ռազմամթերքի ենթադրյալ ապօրինի շրջանառության մեջ:

Վերջինիս գործով դատարան պետք է ներկայանային ՀՅԴ բյուրոյի նախկին ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը, ինչպես նաեւ Արցախի անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Վիտալի Բալասանյանը, սակայն վերջիններս չէին ներկայացել:

ՆԻՍՏ՝ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԳՈՐԾՈՎ

Բարձրագույն դատական խորհուրդը հայտնեց. «Ի պատասխան Դավիթ Հարությունյանի կողմից՝ իր լիազորությունների դադարեցման հարցի վերանայման խնդրանքով ԲԴԽ ներկայացված միջնորդության քննության վերաբերյալ մի քանի լրագրողների հարցադրումների՝ տեղեկացնում եմ, որ Բարձրագույն դատական խորհրդից հայտնել են, որ նշված հարցը ընդգրկվել էր 2024 թվականի սեպտեմբերի 3-ի նիստի օրակարգում:

Նիստի ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Կարեն Անդրեասյանը պնդել է 2024 թվականի օգոստոսի 27-ին ներկայացված ինքնաբացարկի իր միջնորդությունը, որը Խորհրդի անդամների կողմից քննարկման արդյունքում բավարարվել է:

Միջնորդությամբ ներկայացված հարցը նիստում քննարկելու անհրաժեշտության բացակայությամբ պայմանավորված՝ Խորհուրդը որոշել է այն քննության առնել գրավոր ընթացակարգով՝ 2024 թվականի սեպտեմբերի 17-ին, ժամը՝ 16:30-ին:

Նշված օրը տեղի կունենա ԲԴԽ նիստը, որտեղ գրավոր ընթացակարգով, այսինքն, առանց կողմերի մասնակցությամբ, ԲԴԽ զեկուցող անդամը կներկայացնի գործի մանրամասները եւ զեկույցի ներկայացման արդյունքում ի հայտ եկած հարցադրումները գրավոր կուղղվեն Դավիթ Հարությունյանին»:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 3-ից 4-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 118 դեպք, որից 5-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԱՃՈՅԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Սեպտեմբերի 2-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը այցելել է Կիրանցի նորակառույց դպրոց: Կիրանց գյուղից հայտնեցին՝ որպեսզի նոր ձեւավորված սահմանից ընդամենը 40 մետր հեռավորությամբ գտնվող դպրոցի շրջակայքի բարեկարգումն ավարտեն ու Նիկոլ Փաշինյանը բարետես տեսարան տեսնի, հանրապետության տարբեր վայրերից, այդ թվում՝ Լոռու մարզի Մարգահովիտ գյուղից Կիրանց բանվորներ են բերել, նրանց օրական 25 հազար դրամ վճարել:

ԴՊՐՈՑԸ՝ ԱՆՄԽԻԹԱՐ ՎԻՃԱԿՈՒՄ

Հեռավոր, սահմանամերձ Բարեկավանի 8-ամյա դպրոցը 1970-ական թվականների կեսերին ուներ 330 աշակերտ, իսկ գյուղի 9-10-րդ դասարանցիները հաճախում էին հարեւան Կոթի գյուղի, Նոյեմբերյան շրջկենտրոնի դպրոցներ: Նոր՝ 2024-2025 ուստարում Բարեկամավանի Մայիս Ղարաքեշիշյանի անվան միջնակարգ դպրոցն ունի 18 աշակերտ, որոնցից 9-ը՝ անցյալ տարի Արցախից բռնագաղթած եւ Բարեկամավանում բնակություն հաստատած 3 ընտանիքների երեխաներն են: Անցյալ տարի դպրոցն ունեցել է 4 շրջանավարտ, այս ուսումնական տարում կրթօջախը շրջանավարտ չի ունենա.12-րդ դասարանն աշակերտ չունի: Դպրոցի առաջին դասարանում կա մեկ աշակերտ, ով Արցախից բռնագաղթածների զավակ է: Երկրորդ դասարանում նույնպես կա մեկ աշակերտ, 1-2 դասարանները միավորված երկկոմպլեկտ են, 3-4-րդ դասարաններում միասին նույնպես 2 աշակերտ կա, այդ դասարանները եւս երկկոմպլեկտ են, 5-րդ դասարանն ունի 3 աշակերտ, այն առանձին դասարան է: Երկկոմպլեկտ են նաեւ 6-7, 10-11 դասարանները: Բարեկամավանի դպրոցի երկարամյա տնօրեն, իր գյուղի նվիրյալ Աստղիկ Ազատյանին մտահոգում է միայն դպրոցի աշակերտների փոքր թվաքանակը:

ԿՈՎԵՐԸ ՎԻՐԱՎՈՐՎԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ԴԱՇՏՈՒՄ

Օգոստոսի 31-ի ուշ երեկոյան Ոսկեպար գյուղի 3 ընտանիքի պատկանող 9 կով հայտնվել է Ադրբեջանին սահմանակից, Ոսկեպար-Կիրանց նախկին, այժմ չգործող ճանապարհին կից գտնվող ականապատ դաշտում: Անասնատերերից տեղեկացանք, որ 9 կովերից 2-ը բարեհաջող դուրս են եկել փշալարով ցանկապատված, ականապատ դաշտից, 3-ը վիրավորվել են հակահետեւակային ականների պայթյուններից, 4 կով դեռեւս գտնվում է ականապատ դաշտում: Անասնատերերը հայտնեցին, որ Ոսկեպարից դեպի Կիրանց տանող այդ հատվածում սահմանազատում չի իրականացվել, այն վերահսկվում է ՀՀ պաշտպանության նախարարության ենթակայությամբ ծառայող զինծառայողների կողմից:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նիստում քննարկվել է «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Ներկայացնելով առաջարկվող փոփոխությունները՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը նշել է, որ «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» օրենքում փոփոխություններով առաջարկվում է «հավաքական թիմ» բառերը փոխարինել «հավաքական» բառով:

Այն մարզաձեւերի շարքին, որոնց ուղղությամբ պետության կողմից տարբեր միջազգային մրցաշարերում 1-3-րդ տեղերը գրաված մարզիկներին, նրանց մարզիչներին ու բժիշկներին տրվում է դրամական պարգեւներ, առաջարկվում է ավելացնել կարատե, քիք-բոքսինգ, մուայթայ մարզաձեւերը: Ընդ որում, Կարեն Գիլոյանն ընդգծել է՝ ԿԳՄՍ նախարարությունը համագործակցում է այն ֆեդերացիաների հետ, որոնք հանդիսանում են տվյալ մարզաձեւի միջազգային ֆեդերացիայի անդամ եւ ունեն համապատասխան արտոնագիր:

Առաջարկվում է նաեւ սահմանել մարզառողջարարական՝ ֆիթնես դահլիճներին ու մարզիչներին, լողավազաններին ներկայացվող չափորոշիչները սահմանելու վերաբերյալ դեպքերը:

Օրենքի 9-րդ հոդվածում, որտեղ սահմանված են ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունները, առաջարկվում է ավելացնել երեք նոր կետ՝ մարզական ենթակառուցվածքների կառավարման ուղղությամբ մասնավոր ոլորտի հետ համագործակցության, ինչպես նաեւ մարզառողջարարական (ֆիթնես) մարզասրահների, անկախ սեփականության ձեւից, մարզիչների արտոնագրման եւ վերջինիս կարգը սահմանելու մասին:

Նախարարի տեղակալի փոխանցմամբ՝ օրենքի նախագծում առաջարկվում է կատարել նաեւ հետեւյալ լրացումը. «Մարզերում մասնավոր կամ մասնավորի կողմից շահագործվող մարզառողջարարական (ֆիթնես) մարզասրահների ու լողավազանների գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը կարող են դիմել եւ սահմանված չափորոշիչներին համապատասխանելու դեպքում՝ ստանալ ֆինանսավորում պետության միջոցներից՝ Կառավարության սահմանած կարգի համաձայն»:

Կարեն Գիլոյանը տեղեկացրել է՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն ամիսներ շարունակ մասնավորի հետ քննարկում է մարզառողջարարական (ֆիթնես) մարզասրահների կառուցման հարցը: Բանակցությունների արդյունքում կենտրոններից մեկի հետ մոտ ժամանակներս հուշագիր կկնքվի, եւ նախնական պայմանավորվածության համաձայն՝ ՀՀ 3 համայնքներում՝ Եղեգնաձորում, Արարատում եւ Վարդենիսում, մասնավորի կողմից կկառուցվեն եւ կշահագործվեն մարզառողջարարական կենտրոններ, որոնք բացի ֆիթնես դահլիճներից՝ նաեւ խաղային դահլիճ կունենան:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, անդրադառնալով մարզառողջարարական (ֆիթնես) մարզասրահների մարզիչների արտոնագրման հարցին, նշել է՝ այդ պահանջը, կարելի է ասել, գալիս է հենց ոլորտի ներկայացուցիչներից:

Նախարարը կարեւորել է մարզիչների արտոնագրման հնարավորությունը եւ հետագայում նաեւ վերապատրաստումը:

Այդուհանդերձ, ֆիթնես մարզիչների արտոնագրումը դեռեւս օրենքով սահմանված պահանջ չէ:

Քննարկման արդյունքում պատգամավորները բարձրացրել են մի շարք հարցեր եւ առաջարկել մինչեւ երկրորդ ընթերցմամբ քննարկման ներկայացնելը լրամշակել այն:

Առաջին ընթերցմամբ քննարկված նախագիծը ստացել է դրական եզրակացություն եւ առաջարկվել այն ընդգրկել ԱԺ առաջիկա հերթական նիստերի օրակարգի նախագծում:

Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը:

Մրցույթի արդյունքում ֆինանսավորման է երաշխավորվել 18 գիտական թեմա: Թեմաների իրականացման համար արտերկրի ղեկավարից եւ 2-5 անդամից բաղկացած գիտահետազոտական խմբերն ունեն 5 տարի ժամանակ:

Առաջին 2 տարվա ընթացքում կազմակերպությունում, որտեղ աշխատելու են տվյալ գիտական խմբերը, կձեւավորվեն նոր գիտական ստորաբաժանումներ՝ հեռավար լաբորատորիաներ, ինչն էլ հենց մրցույթի հիմնական նպատակներից է:

Միաժամանակ, մրցույթը կնպաստի ներպետական եւ միջազգային համագործակցության խթանմանը, Սփյուռքի գիտական ներուժի ներգրավմանը, երիտասարդ հետազոտողների եւ ասպիրանտների ներգրավմանը, միջազգային հետազոտական միջավայրին երիտասարդ հետազոտողների ինտեգրմանը եւ այլն:

Մրցույթն անցկացվում է արդեն երրորդ անգամ. նախկինում հայտարարված ու ամփոփված մրցույթների արդյունքներով ընտրվել էին համապատասխանաբար 15 եւ 18 գիտական թեմաներ:

Յուրաքանչյուր նախագծի ֆինանսավորման ընդհանուր առավելագույն չափը կազմել է 130 մլն դրամ:

ԱՌԱՋԻՆ ՈՒՂԻՂ ՉՎԵՐԹԸ

Հայաստանի եւ Չինաստանի միջեւ ուղիղ չվերթն արդեն իրականություն է:

Զվարթնոց օդանավակայանում մեկ օր առաջ առաջին անգամ գործարկվել է Ուրումչի-Երեւան-Ուրումչի երթուղով առաջին չվերթը:

Թռիչքները նախնական՝ կիրականացվեն շաբաթական երկու անգամ՝ յուրաքանչյուր երեքշաբթի եւ շաբաթ օրերին, իսկ տեւողությունը 4-5 ժամ կլինի:

Չվերթի դիմավորման արարողությանը ներկա են եղել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, քաղավիացիայի կոմիտեի նախագահ Միհրան Խաչատրյանը, Հայաստանում Չինաստանի դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Չեն Մինը, Չինական Հարավային ավիաուղիների ավիաընկերության տնօրենի տեղակալ Հե Դաանն:

ՀՀ-ում Չինաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Չեն Մինն էլ նշում է՝ Հայաստանի եւ Չինաստանի միջեւ առաջին ուղիղ չվերթը նոր էջ է երկու երկրների բարեկամական հարաբերություններում:

Նրա խոսքով՝ Ուրումչին Չինաստանի կարեւոր դարպասն է դեպի Արեւմուտք, որտեղից կարելի է շարունակել ճանապարհորդությունը դեպի Պեկին, Շանհայ եւ այլ քաղաքներ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 1 մարդ զոհվել է, 18-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՍԿՍԵԼ

Երեւանի իշխանությունների հետ համատեղ նախատեսում ենք սկսել քաղաքի կենտրոնի ենթակառուցվածքի արդիականացման աշխատանքը: Այս մասին երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության գլխավոր տնօրեն Կարեն Հարությունյանը:

Նա նշել է, որ աշխատանքներն սկսվելու են 10 օրից եւ ուղղվելու են մատակարարվող էլեկտրաէներգիայի հուսալիության բարձրացմանը:

Գլխավոր տնօրենը տեղեկացրել է, որ այս եւ հաջորդ տարվա ընթացքում իրականացվող նախագծերի վրա ծախսվելու է 6,3 մլրդ դրամ, դրանք կհատկացվեն Երեւանի կենտրոնի բոլոր կայանների թարմացմանը, որպեսզի բարձրացվի մատակարարվող էլեկտրաէներգիայի որակը:

«ՀԷՑ» ՓԲԸ Տնօրենների խորհրդի նախագահ Կարեն Դարբինյանն իր հերթին նշել է, որ նախագծի իրականացումը կտեւի 2-3 տարի: Հարությունյանն ավելացրել է, որ դրա համար ընկերությունն ունի սեփական միջոցներ, պարտատոմսերի թողարկման հաջող փորձ, ինչպես նաեւ ֆինանսական կազմակերպությունների հետ աշխատելու փորձ: «Ֆինանսական խնդիրներ չկան, բայց ներդրումներն անհնար է իրականացնել անմիջապես, որպեսզի դա էական ազդեցություն չթողնի սակագների վրա: Քաղաքացիներին կոչ եմ անում ըմբռնումով մոտենալ անհարմարություններին, որոնք կարող են առաջացնել նշված աշխատանքները»,- ասել է նա:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՄԻԱՆԱ «ԱՐԵՎԱՅԻՆ ԴԱՇԻՆՔԻՆ»

«Միջազգային արեւային դաշինք» (ՄԱԴ) հիմնադրամը ստեղծվել է 2020 թվականին: «Միջազգային արեւային դաշինքի հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագրի հիմքն «Արեւային էներգետիկայի խթանմամբ զբաղվող պետությունների Միջազգային արեւային դաշինքի մեկնարկի մասին» 2015 թվականի նոյեմբերի 30-ի ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության հարցերին նվիրված խորհրդաժողովում ընդունված Փարիզի հայտարարությունն է: Մինչ այժմ համաձայնագիրը ստորագրել է 118 պետություն, որոնցից 97-ն այն վավերացրել են: Այս մասին ասել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանը ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի՝ սեպտեմբերի 4-ի նիստում:

Առաջին ընթերցմամբ քննարկվել է ««Միջազգային արեւային դաշինքի (ՄԱԴ) հիմնադրման մասին» շրջանակային համաձայնագիրը վավերացնելու մասին» օրենքի նախագիծը: Հայաստանը դաշինքին միանալու փաստաթուղթը ստորագրել է 2023 թվականի նոյեմբերին: Հակոբ Վարդանյանի խոսքով բավականին օգտակար կլինի դաշինքի աշխատանքներին Հայաստանի մասնակցությունը: Նախագիծը հանձնաժողովում արժանացել է դրական եզրակացության:

MyTAX

ԻՆՉՊԵՍ ՕԳՏՎԵԼ ԲՋՋԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻՑ

Սեպտեմբերի 1-ից ուժի մեջ են մտել տաքսի ծառայության ոլորտի նոր կարգավորումները: ՀՀ տարածքում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղեւորափոխադրումներ կարող են իրականացնել միայն այն կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը կամ ֆիզիկական անձինք, որոնք միացել են ՊԵԿ համակարգին եւ տրամադրում են էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն:

Պետական եկամուտների կոմիտեն առանձնացրել 10 պարզ քայլ՝ ինչպես անհատ տաքսի վարորդները պետք է գրանցվեն MyTAX բջջային հավելվածում, գեներացնեն եւ տրամադրեն էլեկտրոնային ՀԴՄ կտրոն:

Քայլ 1
Ներբեռնել հավելվածը
Եթե անհատ տաքսի վարորդ եք, ապա ՊԵԿ համակարգին միանալու եւ էլեկտրոնային ՀԴՄ գեներացնելու համար պետք է ներբեռնեք MyTAX հավելվածը Apple App Store-ից՝ iOS-ի համար՝ https://apps.apple.com/am/app/my-tax-armenia/id6633438781 եւ Google Play Store-ից Android-ի համար:

Քայլ 2
Մուտք գործել համակարգ
ՀՀ քաղաքացիները հավելված մուտք գործելու համար պետք է սեղմեն «ՀՀ քաղաքացի» կոճակը եւ մուտք գործեն «Ես եմ» համակարգի միջոցով, իսկ օտարերկրյա քաղաքացիները պետք է սեղմեն «Օտարերկրացի» կոճակը, ապա մուտք գործեն ՀՎՀՀ-ով եւ օգտվողի անուն-գաղտնաբառով:

Քայլ 3
Ընտրել մուտքի տարբերակը
«Ես եմ» համակարգի միջոցով մուտք գործելու համար անհրաժեշտ է համաձայնություն տալ համակարգի պայմաններին, սեղմել մուտք «Ես եմ» համակարգի միջոցով կոճակը եւ ընտրել նույնականացման տեսակը՝ բջջային նույնականացման քարտ:

Քայլ 4
Անցնել նույնականացում
Մուտքագրեք հեռախոսահամարը, որի համար նախապես ակտիվացրել եք բջջային նույնականացման ծառայությունը: Սեղմեք «Մուտք» կոճակը, որից հետո մուտքը հաստատելու համար անմիջապես Ձեր հեռախոսին կստանաք հաղորդագրություն, որտեղ պետք է հավաքել PIN կոդը:

Քայլ 5
Ակտիվացնել մուտքը
Հետագայում հավելված մուտք գործելու համար բջջային նույնականացման գործընթացը կրկին չանցնելու համար կարող եք հավելվածում սահմանել PIN ծածկագիր կամ օգտվել բիոմետրիկ կամ կենսաչափական նույնականացումից:

Քայլ 6
Ստանալ ՀՎՀՀ
Տաքսի ծառայություն մատուցելու համար անհրաժեշտ է հաշվառվել հարկային մարմնում՝ ստանալով ՀՎՀՀ: Այն կարող եք ստանալ հենց նույն հավելվածի միջոցով՝ առանց որեւէ դիմում ներկայացնելու: Պարզապես, գլխավոր էջից սեղմեք «Տաքսի ծառայություն» կոճակը, ապա բացված պատուհանում՝ «Ստանալ» կոճակը: Վերջ, Դուք ունեք ՀՎՀՀ:

Քայլ 7
Ավելացնել մեքենա
«Տաքսի ծառայություն» էջում սեղմեք «Իմ մեքենա» կոճակը եւ մուտքագրեք այն մեքենայի պետհամարանիշը եւ հաշվառման վկայագիրը, որով մատուցում եք տաքսի ծառայություն: Նույն մեքենայով հաջորդ անգամ պատվերներ կատարելիս այլեւս կարիք չի լինի կրկնել այս գործողությունը:

Քայլ 8
Ձեւավորել ՀԴՄ կտրոն
Տաքսի ծառայության յուրաքանչյուր պատվերն ավարտելուց հետո անհրաժեշտ է «Տաքսի ծառայություն» էջում սեղմել «Ստեղծել նոր կտրոն» կոճակը՝ էլեկտրոնային ՀԴՄ կտրոն ձեւավորելու եւ պատվիրատուին այն տրամադրելու համար:

Քայլ 9
Գեներացնել ՀԴՄ կտրոն
Հաջորդիվ պետք է գեներացնել էլեկտրոնային ՀԴՄ կտրոնը, որի գործընթացը շատ պարզ է.պետք է մուտքագրել գումարը, ընտրել վճարման տեսակը՝կանխիկ կամ անկանխիկ եւ սեղմել «Հաստատել» կոճակը:

Քայլ 10
Ուղարկել ՀԴՄ կտրոնը
Էլեկտրոնային ՀԴՄ կտրոնը գեներացնելուց հետո այն կարող եք փոխանցել պատվիրատուին՝ իր նախընտրած առցանց տարբերակներից որեւէ մեկով՝ էլեկտրոնային փոստ, Viber, WhatsApp եւ այլ հավելվածներ կամ սկանավորելով կտրոնի վրա առկա QR կոդը:

Վերջ, գործընթացն ավարտված է:

Հավելվածի «Տաքսի ծառայություն» էջում հնարավորություն ունեք տեսնելու Ձեր կողմից գեներացված բոլոր ՀԴՄ կտրոնները: Հաջորդ պատվերների ժամանակ այս քայլերը նորից անցնելու կարիք չկա՝ գլխավոր էջում, պարզապես, սեղմեք «Նոր կտրոն» կոճակը եւ գեներացրեք կտրոնը՝ լրացնելով պահանջվող տվյալները:

ՀՀ ՊԵԿ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՄՆԱՃՅՈՒՂԸ ՎԵՐԱԲԵՆԴԱՎՈՐՎԵԼ Է

Վերաբերենդավորումից հետո «Ֆասթ» բանկի «Բաղրամյան» մասնաճյուղն ունի անհրաժեշտ բոլոր ռեսուրսները՝ հաճախորդներին ընդունելու եւ սպասարկելու հարմարավետ, տեխնիկապես հագեցած եւ ժամանակակից մասնաճյուղում: Մասնաճյուղի կառավարչի խոսքով՝ վերաբրենդավորումն ուղղված էր հաճախորդների համար լավագույն փորձառությունն ապահովելուն:

«Բոլոր փոփոխությունների նպատակը մեր հաճախորդներին ավելի որակով սպասարկելն է եւ բոլոր գործընթացներն ավելի սահուն կազմակերպելը:

Ավելի քան հինգ անգամ ընդլայնել ենք մասնաճյուղի տարածքը, ստեղծել ենք հարմարավետ սպասասրահ հաճախորդների համար», - նշել է մասնաճյուղի կառավարիչ Կարեն Սահակյանը:

Բանկը շարունակաբար բարելավում է հաճախորդների սպասարկման որակը՝ ձգտելով Հայաստանում ներդնել լավագույն միջազգային փորձը: Նոր ու հարմարավետ միջավայրում «Ֆասթ» բանկի հաճախորդները 24/7 գրաֆիկով կօգտվեն բանկի կողմից առաջարկվող բոլոր ծառայություններից՝ վարկեր, ավանդներ, միջազգային փոխանցումներ, տարադրամի փոխարկում, եւ այլն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Մանուշակ Անդրուշի Մարտիրոսյանս, տարիներ առաջ կորցրել եմ Լենինականի երկաթուղային տրանսպորտի տեխնիկումի (այժմ՝ «Գյումրու պետական տեխնիկական քոլեջ») դիպլոմը՝ ՊՏՆ001782, գրանցում՝ թիվ 1015, 29.06.1987թ.: Գտնողին խնդրում եմ զանգահարել 077585124 հեռախոսահամարով:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի փոփոխություն «Բի Էս Թի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Ժողովուրդ» օրաթերթի 24.05.2024թ. թիվ 70 (2920) համարի 6-րդ էջում տպագրված «Աճուրդի մասին հրապարակային ծանուցման»՝ տեղեկացնում ենք, որ ծանուցման մեջ նշված՝ ՀՀ, ք. Երեւան, Կենտրոն, Ծ. Իսակովի պողոտա, 4 շենք, 9 հասցեում գտնվող 90,47 քմ բնակարանի աճուրդային փուլերը շարունակվելու են 09.09.2024թ.-ից, 63000000 ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ «Աճուրդի մասին հրապարակային ծանուցման» մեջ նշված ընթացակարգով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.: «Աճուրդի մասին հրապարակային ծանուցման» մյուս դրույթները մնում են անփոփոխ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

BOOKFEST 2024

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԳՐՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության Գրքի երեւանյան միջազգային 7-րդ փառատոնը տեղի կունենա սեպտեմբերի 6-8-ը Հայաստանի ազգային պատկերասրահում եւ Հայաստանի պատմության թանգարանի կամարաշարում: Գրքի տոնավաճառի ընթացքում գնորդներին կտրամադրվի 20-ից 40% պարտադիր զեղչ:

Ծրագրում նախատեսված են երեսուներկու միջոցառումներ, որոնց թվում՝ սպասված գրքերի շնորհանդեսներ, հանդիպումներ հայ եւ արտասահմանցի գրողների հետ (Լատվիա, Իսպանիա, Իտալիա, Վրաստան, Սլովենիա, Ռուսաստան), գրական ստենդափ, բանավեճեր, թատերական եւ երաժշտական ներկայացումներ, պերֆորմանսներ, պոեզիայի ընթերցումներ, փիչինգ եւ այլն:

Փառատոնի փակման արարողության ժամանակ (սեպտեմբերի 8, 19:00) տեղի կունենա մրցանակաբաշխություն, եւ հայտնի կդառնան գրական մրցույթի հաղթողները «Պոեզիա», «Արձակ», «Դրամատուրգիա» եւ «Մանկապատանեկան գրականություն» անվանակարգերում:

Փառատոնն իրականացնում են Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը եւ «Գրքի փառատոն կրթամշակութային» հասարակական կազմակերպությունը Ստեղծագործ Եվրոպայի «Վերսոպոլիս» նախագծի աջակցությամբ:

Գրականության եւ արվեստի թանգարանի տնօրեն՝ Սյուզաննա Խոջամիրյանը նշեց նաեւ. «Փառատոնն այս տարի առանձնանում է յուրահատուկ նախաձեռնությամբ, փառատոնի շրջանակներում ողջ երեկոյի ընթացքում կցուցադրվի թանգարանային բացառիկ նմուշ՝ արեւմտահայ գրող Միսակ Մեծարենցի մատանին: Գրականության եւ արվեստի թանգարանում են պահվում հայաստանցի, սփյուռքահայ գրեթե բոլոր գրողների, գրական գործիչների եւ ոլորտի երեւելիների անձնական արխիվները: Արխիվները ներառում են ոչ միայն գրավոր ժառանգության նմուշներ այլեւ անձնական իրեր՝ այդ թվում կահկարասի, հագուստ, զարդեր եւ այլն: Հենց այս արխիվին է պատկանում Միսակ Մեծարենցի մատանին, որը սովորական մատանի չէ, կիսաթանկարժեք, երկշերտ քարից պատրաստված մատանի է, որը նվիրել է իր մայրը: Բանաստեղծը կրել եւ փայփայել է այն իր ողջ կյանքի ընթացքում»:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը նշեց, որ հավանաբար մյուս տարի փառատոնը կկայանա նաեւ մարզերում:

Փառատոնի հիմնադիրը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն է: Գրականության ոլորտի ամենամեծ նախագիծն իրականացվում է 2017 թվականից: Ծրագրի գլխավոր հովանավորը Երեւանի քաղաքապետարանն է: Այս տարի երեւանյան գրքի միջազգային յոթերորդ փառատոնի գլխավոր ձեւավորողը Վիլյամ Կարապետյանն է:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ՝ «ԿԾԵԳ»

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ «Դիզակ ԱՐՏ» մշակութային ՀԿ-ն ««Կծեգ» Արցախի բարբառների հանրահռչակում» ծրագրի շրջանակում նախաձեռնել է «Արա պա ստի պեն կինի՞» թատերական ներկայացումը:

Ներկայացման առաջնախաղը տեղի կունենա սեպտեմբերի 9-ին՝ ժամը 19:00-ին, Հայաստանի կինոգործիչների միության փոքր դահլիճում (Հենրիկ Մալյանի անվան թատրոն): Ներկայացումներ են նախատեսված նաեւ Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի եւ Տավուշի մարզերում:

«Արա պա ստի պեն կինի՞» թատերական ներկայացումը բեմադրվել է՝ ըստ Ալեքսանդր Մանասյանի համանուն ստեղծագործության. մասնակիցները «Դիզակ ԱՐՏ ՄԵԿ» թատերախմբի սաներն են, իսկ բեմադրիչը՝ «Դիզակ ԱՐՏ» կենտրոնի դասատու Սրբուհի Բալայանը: Բեմական հագուստն ու բեմական ձեւավորումն արցախյան մոտիվներով են:

Թատերական ներկայացման միջոցով վերարտադրվում են արցախցու մտածելակերպը, սովորույթները, ասույթները, առած-ասացվածքներն ու խաղերը:

Ծրագրի նպատակը հայկական ոչ նյութական մշակութային ժառանգության կարեւոր դրսեւորումներից մեկի՝ Լեռնային Ղարաբաղի բարբառների կենսունակության ապահովումն է:

«ՆԱՐԵԿԱՑԻ» ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ. 20–ԱՄՅԱ ՎԵՐԵԼՔ

Սեպտեմբերի 5-ին, ժամը՝19:00-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «20-ամյա վերելք» խորագրով ցուցահանդես եւ համերգ՝ նվիրված «Նարեկացի» արվեստի միության (ՆԱՄ) 20-ամյա գործունեությանը:

Միջոցառումը աղոթքով կմեկնարկի Արարատյան Հայրապետական թեմի հոգեւորական Տեր Շահե քահանա Հայրապետյանը:

Ցուցահանդեսի շրջանակում կներկայացվեն հայ նշանավոր գեղանկարիչներ եւ քանդակագործներ Արտո Չաքմաքչյանի, Հակոբ Հակոբյանի, Ռոբերտ Էլիբեկյանի, Տիգրան Մատուլյանի, Արմեն Խոջոյանի, Ռոբերտ Ասկարյանի եւ Սամվել Թավադյանի աշխատանքները: Կցուցադրվեն նաեւ «Նարեկացի» արվեստի միության հիմնադիր Նարեկ Յարութիւնեանի լուսանկարչական աշխատանքները:

Համերգային ծրագրում կհնչեն հատվածներ՝ Վահան Արծրունու «Կոմիտաս. Տասը հայտնություն» ձայնասկավառակից, հատվածներ «Նաղաշ» անսամբլի «Կարոտի երգեր» շարքից (խոսք՝Մկրտիչ Նաղաշի, երաժշտությունը՝ Ջոն Հոդյանի): Միջազգային մրցույթների դափնեկիր «Փարոս» կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր՝ Ռաֆֆի Միքայէլեան, խմբավար՝ Ռուբեն Կարասեֆերյան), «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը (գեղարվեստական ղեկավար Հելբերտ Ասատրյան) եւ «Նարեկացի» նվագախումբը (գեղարվեստական ղեկավար Արտեմ Խաչատուր) կկատարեն հոգեւոր եւ ժողովրդական ստեղծագործություններ:

Մենակատարներ՝ Քնար Հարթունյան, Նովա Հարթունյան, Լուսին Վանես, Սմբատ Խալաթյան, Հարություն Մուրադյան:

Համերգային ծրագրի ավարտին կհնչի Սմբատ Խալաթյանի՝ «Ձոն» ստեղծագործությունը՝ նվիրված «Նարեկացի» արվեստի միության 20-ամյակին:

Միջոցառման մուտքն ազատ է լինելու:

ՄԱՐԶԱԿԱՆ

Յ. ՀՈՎԵՅԱՆԸ՝ ԲՐՈՆԶԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Իսպանիայում ընթացող ըմբշամարտի Աշխարհի Մ20 առաջնությանը Յուրիկ Հովեյանը (63 կգ) նվաճեց Աշխարհի երիտասարդական առաջնության բրոնզե մեդալ: Այս մասին հայտնում են Ըմբշամարտի ֆեդերացիայից:

ՀԱՅ ԸՄԲԻՇԸ ՀԱՂԹԵՑ ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ՄՐՑԱԿՑԻՆ

Իսպանիայում ընթացող ըմբշամարտի Աշխարհի Մ20 առաջնությանը 72 կգ քաշային ըմբիշ Աշոտ Խաչատրյանը հաղթեց ադրբեջանցի մրցակցին եւ դուրս եկավ Աշխարհի երիտասարդական առաջնության եզրափակիչ: Այդ մասին հայտնում են Ըմբշամարտի ֆեդերացիայից:

Նա կիսաեզրափակիչում հաղթեց 4-1 հաշվով:

ՄԱՐԶԱԴԱՇՏԸ՝ ՆԱԽԿԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ

«Ֆլումինենսեն» պաշտոնապես հայտարարել է, որ «Վալե դե Լարանջեյրաս» ակումբի ակադեմիական մարզադաշտը կվերանվանվի ի պատիվ թիմի լեգենդար սան Մարսելոյի: Այսուհետ նրան կկոչեն «Մարսելո Վիեյրա»:

Անվանափոխության պաշտոնական արարողությունը տեղի կունենա հինգշաբթի օրը՝ սեպտեմբերի 5-ին:

Մարսելոն «Ֆլումինենսեի» սան է, հիմնական թիմում խաղացել է մինչեւ 2007 թվականը, որից հետո 2023 թվականին վերադարձել է հարազատ ակումբ:

ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ

Լոնդոնի «Չելսին» ամենաշատն է վաստակել այս տրանսֆերային պատուհանի ընթացքում իր ֆուտբոլիստների տրանսֆերների վաճառքից՝ 198 միլիոն եվրո:

Սակայն լոնդոնցիների տրանսֆերային բալանսը բացասական է. ակումբը 238,5 մլն եվրո է ծախսել թիմի նորեկների տրանսֆերների համար այս ամառ: Անգլիական ակումբը ոչ միայն ամենաշատն է վաստակել, այլ նաեւ ամենաշատն է ծախսել այս ամառ:

«Լիդսը» «արիստոկրատներից» հետո երկրորդ ակումբն է, որն ամենաշատն է վաստակել այս ամառ: Չեմպիոնշիփում հանդես եկող ակումբը վաստակել է մոտ 163 միլոն եվրո իր ֆուտբոլիստների տրանսֆերների վաճառքից: «Լիդսը» նաեւ լավագույն դրական բալանսն ունի բոլոր ակումբների շրջանում՝ 138 մլն եվրո:

Լավագույն եռյակն այս ցուցանիշով եզրափակում է «Աստոն Վիլան»՝ 145 միլիոն եվրո:

Լավագույն տասնյակում են նաեւ «Ռենը», «Ատալանտան», «Վուլվերհեմփթոնը», «Բարնլին» եւ «Լայպցիգը»:

● *Սեպտեմբերի 7-ին Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում կբեմադրվի Պուչինիի «Տուրանդոտ» օպերան: Տոմսերի արժեքը՝ 5.000-15.000 դրամ:*

ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ավտոապահովագրողների բյուրոն ո՞ր դեպքում է հատուցում տուժած անձանց պատճառված վնասները:

Արամ Հարությունյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ռ. Հարությունյանի հարցին ի պատասխան՝տեղեկացնում ենք, որ բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է տուժած անձանց պատճառված վնասները, եթե՝

● վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձն անհայտ է: Այս դեպքում Բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է միայն տուժած անձանց պատճառված անձնական վնասները:

● Վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր:

● Վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ:

● Վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ (սնանկ), եթե նա, օրենքի համաձայն, պարտավոր էր հատուցել պատճառված վնասը:

Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ երաշխավորման ֆոնդը գոյանում է Բյուրոյի անդամների կողմից կատարվող միանվագ, պարբերական եւ լրացուցիչ վճարներից, օրենքով սահմանված այլ ձեւերով ներդրված միջոցներից, ինչպես նաեւ այն ակտիվներից, որոնցում ներդրվել են դրանք, եւ դրանց կառավարման արդյունքում ստացված եկամուտներից: Երաշխավորման ֆոնդի միջոցները սեփականության իրավունքով պատկանում են Բյուրոյին: Դրանք կարող են օգտագործվել բացառապես Երաշխավորման ֆոնդի համար օրենքով սահմանված նպատակներով եւ դեպքերում:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է որոշվում բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունքի՝ դատական կարգով դադարեցման դեպքում սեփականատիրոջ կողմից վճարվող փոխհատուցման չափը:

Անաստաս Միքայելյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետեւյալ կերպ. յուրաքանչյուր բնակության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհատույց օգտագործման իրավունք ունեցող անձանց եւ սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից եւ ոչ ավելի, քան 9 քառակուսի մետրը: Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար եւ տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված):

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելուց եւ այդ գույքն իրացնելուց հետո գրավատուն ու բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձինք տան (բնակարանի) սեփականատիրոջ պահանջով պարտավոր են ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ազատել զբաղեցրած բնակելի տարածությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Գոհար Հարությունյան / Լիլիթ Մկրտչյան / Արուսյակ Գրիգորյան թիմային եռյակը 50մ խառը վազք մրցաձեւում 1086 միավոր արդյունքով դարձել է Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+11 + 16 +28 + 32
Կոտայքի լեռներ	+10 + 16 +28 + 31
Կոտայքի նախալեռներ	+20 + 23 +34 + 32
Գեղարքունիք	+11 + 16 +25 + 28
Լոռի	+14 + 18 +29 + 33
Տավուշ	+18 + 22 +31 + 36
Արագածոտնի լեռներ	+11 + 14 +17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18 +27 + 31
Արարատ	+23 + 25 +35 + 37
Արմավիր	+20 + 22 +32 + 35
Վայոց ձորի լեռներ	+11 + 14 +29 + 31
Վայոց ձորի նախալեռներ	+21 + 23 +34 + 37
Սյունիքի հովիտներ	+21 + 24 +33 + 37
Սյունիքի նախալեռներ	+14 + 17 +30 + 32
ԼՂՀ	+13 + 16 +29 + 31
Երեւան	+25 + 27 +35 + 37

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.9.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*